



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին ատյանի դատարան
Վարչական գործ N 0106/05/2011թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Բեգլարյան

Վարչական գործ N 0106/05/2011թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

7-ին հոկտեմբերի 2011թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ա. Հայրապետյանի
Գ. Գրիգորյանի
Ի. Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Դավիթ Գեորգիի Վանյանի ընդդեմ
ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության՝ ՆԿ N 081921 որոշումը վերացնելու
պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանի /այսուհետ՝ Վարչական դատարան/ 2011թ. հուլիսի 25-ի վճռի դեմ Դ.Վանյանի
վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվոր Դ.Վանյանը պահանջել է վերացնել ԼՂՀ
ոստիկանության ճանապարհային ոստիկանության՝ ՆԿ N 081921 որոշումը:
Վարչական դատարանը 2011թ. հուլիսի 25-ի վճռով հայցը մերժել է:
Նշված վճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Դ.Վանյանը:
Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ
հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ Վարչական դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը:

Նշված պնդումը բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Ըստ վերը նշված օրենքի պահանջների՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Մինչդեռ, ըստ բողոք բերողի՝ դատական ծանուցագիրն ու որոշումն այն մասին, որ դատական նիստը նշանակված է 2011թ. հուլիսի 20-ին, ինքը ստացել է 2011թ. հուլիսի 25-ին, ժամը 16:30-ին, երբ արդեն հրապարակվել էր դատարանի վճիռը:

Բացի դրանից, Վարչական դատարանը դատական նիստին չի հրավիրել նաև վկաներ Ս.Խուդունցին և Գ.Վանյանին, ովքեր ներկա են գտնվել վարչական ակտը կազմելու պահին, և նրանց մասին նշված է հայցային դիմումում:

Ուստի, գտնում է, որ դրանով իսկ Վարչական դատարանը խախտել է իր իրավունքը:

Բողոք բերողը խնդրում է բեկանել Վարչական դատարանի 2011թ. հուլիսի 25-ի վճիռը և հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. 2011թ. հունիսի 30-ին Դ.Վանյանը հայց է ներկայացրել դատարան:

2. Դատական նիստը նշանակվել է 2011թ. հուլիսի 20-ին և անց է կացվել հայցվորի բացակայությամբ:

3. Ըստ հայցվոր Դ. Վանյանի՝ դատական նիստի օրվա և ժամի մասին ինքը տեղեկացել է 2011թ. հուլիսի 25-ին, ժամը 16:30-ին:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագրով դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատավարության մասնակիցները...: Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով: Նշված հոդվածի երրորդ մասը սահմանում է, որ ծանուցագրերն ուղարկվում են այն հաշվով, որ դրանց հասցեատերերը դատական նիստին ներկայանալուց կամ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելուց առնվազն հինգ օր առաջ իրազեկվեն դատական նիստի կամ դատավարական գործողությունների կատարման ժամանակի և վայրի վերաբերյալ:

Վերը նշված հոդվածների մեկնաբանությունից հետևում է, որ դատարանը, գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ, պետք է կատարի վկայակոչված հոդվածներով սահմանված կարգով համապատասխան ակտիվ գործողություններ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, այն պետք է լինի այնպիսին, որ հնարավոր լինի ապացուցել գործին մասնակցող անձի դատական նիստի մասին տեղեկացված լինելու փաստը:

Գերագույն դատարանը գտնում է, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձինք պատշաճ ծանուցված են համարվում այն դեպքում, երբ դատարանում հավաստի տեղեկություն է ստացվում դատական ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնելու մասին:

Դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցումը հանդիսանում է կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն պայման:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը ուղղակիորեն սահմանում է, որ Վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություն գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը, և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ԼՂՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Գերագույն դատարանը գտնում է, որ «հավասարության» և «մրցակցության» սկզբունքների ապահովման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնում նվազ բարենպաստ վիճակում, ինչպես նաև յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Դրանով է պայմանավորված դատական նիստի ժամանակի, վայրի մասին կողմերին պատշաճ տեղեկացնելու դատարանի պարտականությունը, որի չպահպանելը հանդիսանում է դատավարական իրավունքի էական խախտում:

Մինչդեռ, գործի նյութերից չի երևում, որ դատարանը հայցվորին պատշաճ ձևով է տեղեկացրել դատական նիստի օրվա և ժամի մասին: Ըստ բողոք բերողի՝ ինքը դատական նիստի օրվա և ժամի մասին տեղեկացել է 2011թ. հուլիսի 25-ին՝ սույն գործով վճռի հրապարակման օրը:

Վարչական դատարանը, գործով հայցվոր Դ.Վանյանին պատշաճ ձևով՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ և 62-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, չի ծանուցել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է առանց հայցվորի, արձանագրելով, որ «հայցվորը դատական նիստին չի ներկայացել, չնայած պատշաճ ծանուցված էր» /գ.-թ.13/, կայացրել է վճիռ:

Փաստորեն, Վարչական դատարանը, խախտելով վերը նշված հոդվածների պահանջները, հայցվոր Դ.Վանյանին զրկել է դատարանում իր դատավարական իրավունքներից օգտվելու և դատական պաշտպանության հնարավորությունից, որի արդյունքում խախտվել է հայցվորի՝ ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իրենց գործի քննության իրավունքը:

Դատավարական նորմի նման խախտումը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետի պահանջներին համապատասխան, դատարանի վճիռը բոլոր դեպքերում բեկանելու հիմք է:

Նյութական նորմի խախտման մասին բողոք բերողի փաստարկներին Գերագույն դատարանը չի անդրադառնում, քանի որ վճռաբեկ բողոքում նշված դատավարական իրավունքի խախտումը՝ Վարչական դատարանի բողոքարկված վճիռը բոլոր դեպքերում բեկանելու բավարար հիմք է:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի էական խախտումը բավարար հիմք է հանդիսանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի երկրորդ կետի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի երկրորդ կետով, 254-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Դավիթ Գեորգիի Վանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբողջությամբ բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. հուլիսի 25-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**